2020

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

30.04.2020թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Որակի ապահովման բաժինը 2019-2020 ուսումնական տարում դեկտեմբերին իրականացրել է հարցումներ 1-ին կուրսի ուսանողների շրջանում մասնագիտության ընտրության դրդապատճառների և կրթական միջավայրի բարելավման վերաբերյալ:

Հարցման նպատակն է ուսումնասիրել, բացահայտել, վերլուծել և գնահատել ուսանողների մասնագիտության ընտրության վրա ազդող գործոնները, ուսանողների աչքերով ներկայացնել բուհի կրթական միջավայրի բարելավման հարցերը:

Հետազոտության հիմքում ընկած են հետևյալ հարցադրումների պարզաբանումները.

- ✓ Ուսանողները հանրապետության ո՞ր բնակավայրերից են եկել ՀՖԿՍՊԻ սովորելու:
- ✓ Ինչպե՞ս են տեղեկացել ՀՖԿՍՊԻ-ում գործող մասնագիտություններով իրականացվող կրթության հնարավորությունների մասին:
- ✓ Ինչո՞ւ են որոշել սովորել ՀՖԿՍՊԻ-ում:
- ✓ Ինչու՞ են ընտրել տվյալ մասնագիտությունը:
- ✓ Ի՞նչը կարող է ուսանողների սովորելու մոտիվացիայի բարձրացման պատճառ դառնալ:
- ✓ Որքանո՞վ են ուսանողները գոհունակ ՀՖԿՍՊԻ-ում գործող գնահատման համակարգից:
- ✓ Որո՞նք են գնահատման համակարգի թերությունները:
- ✓ Ունեն արդյո՞ք ուսանողները մասնագիտությամբ աշխատելու ցանկություն կամ մտադրություններ:
- ✓ Ուսանողների տեսանկյունից պարզել՝ որոնք են կրթական միջավայրի բարելավման համար անհրաժեշտ միջոցառումները:

Տվյալներ հարցման մասնակիցների վերաբերյալ

Մինչ նկարագրելը հարցման մասնակիցների ընտրանքը պետք է ընդգծենք մի իրողության մասին, որը լուրջ մտահոգությունների պատճառ է դառնում: Խոսքը վերաբերում է ուսանողների մեծ թվով բացակայություններին, ինչը ոչ միայն խոչընդոտում էր հարցումների անցկացման բնականոն ընթացը, այլև առավել ակնառու դարձնում բուհում ուսանողների բացակայությունների հարցը, որը 1-ին կուրսում այդքան սուր ու առաջնային խնդիր չպետք է լիներ:

Տվյալ իրավիճակում հնարավոր եղավ ՀՖԿՍՊԻ-ի երկու ֆակուլտետի 1-ին կուրսերի 172[1] ուսանողից հարցմանը ներգրավել միայն 67-ին, որը կազմում է ընդհանուր թվի 39%-ը:

Ինչևէ դրանից չի նվազում հարցված ուսանողների մասնագիտության ընտրության դրդապատճառների ուսումնասիրման, նրանց սովորելու ցանկության վրա ազդող գործոնների գնահատման կարևորությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նաև բուհական կրթությունից ուսանողների ունեցած սպասումներին:

Հարցաթերթերը լրացվել են անանունության սկզբունքով:

Գծապատկեր 1

Հարցման մասնակիցների սոցիալ-ժողովրդագրական տվյալները



Տարիքը



[1] Ուսանողների ընդհանուր քանակը ներկայացված է դեկտեմբեր ամսվա տվյալներով:

Գծապատկեր 2

Նշված բնակավայրերը

Խնդրում ենք նշել՝ Հայաստանի Հանրապետության ո՞ր բնակավայրից և ո՞ր դպրոցից եք եկել ՀՖԿՍՊԻ սովորելու



Հարցման տվյալներից պարզ է դառնում, որ մայրաքաղաքից են ամենից շատ դիմել ՀՖԿՍՊԻ կրթություն ստանալու: Տրված պատասխանների թվի նվազման կարգով դասավորվել են Գեղարքունիքի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի, Արարատի և Տավուշի մարզերը:

Հարցման արդյունքների վերլուծություն

Գծապատկեր 3

Խնդրում ենք նշել՝ տեղեկատվության ի՞նչ աղբյուրներից եք իմացել ինստիտուտի մասին



	ընկերներից	ինստիտուտում սովորող ուսանողներից	Բուհի կողմից կազմակերպվող մասնագիտության կողմնորոշման այցերից	ՀՖԿՍՊԻ-ի պաշտոնական կայքից	ՀՖԿՍՊԻ-ի ֆեյսբուքյան պաշտոնական էջից	այլ (մարզիչից)
	37	10	0	6	1	2
	55%	15%	0%	9%	1.5%	3%

Ինչպես պատկերված է գծապատկեր 3-ում, ուսանողների գերակշիռ մասը (55%) ընկերներից է տեղեկացել ինստիտուտի մասին: Հարցվածների 15%-ը նշել է, որ ինստիտուտում ներկայումս սովորող ուսանողներն են եղել իրենց տեղեկատվության աղբյուրը:

Արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ բուհն ավարտած ուսանողները կամ բուհին ծանոթ անձիք տեղեկատվություն են տրամադրել բուհի վերաբերյալ և կարելի է եզրակացնել նաև, որ խորհուրդ են տվել ընդունվել այնտեղ:

Դրական է, որ բուհի ներկայիս ուսանողներն ու շրջանավարտները ապագա ուսանողներին ուղղորդում են դեպի ՀՖԿՍՊԻ, սակայն հարկավոր է առավել մեծ ուշադրության դարձնել բուհի պաշտոնական կայքի (9%) և ֆեյսբուքյան պաշտոնական էջի (1.5%) ակտիվացմանը՝ ապահովելով, մասնավորապես ՀՖԿՍՊԻ-ի ընդունելության ընթացակարգի, գործող մասնագիտությունների հեռանկարների մասին տեղեկությունների մատչելիությամբ:

Գծապատկեր 4

Ինչ՞ը Ձեզ համար կարող է դառնալ կրթություն ստանալու կարևոր դրդապատճառ



Հատկանշական է, որ մեծ թիվ են կազմում այն ուսանողները (46%), ովքեր կարևորում են մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը:
Ինչպես նշել են ապագա մանկավարժներն ու մարզական լրագրողները (24%) տվյալ մասնագիտության մեծ պահանջարկն է մոտիվացրել իրենց:
Հարցվածներից ընդամենը երկուսը նշել է բարձր աշխատավարձը, իսկ երեքը ընդգծել են ինքնադրսևորման հնարավորությունը:
Ուշադրության է արժանի, որ հարցվածներից ոչ ոք չի ընտրել «առանց գիտելիքների դիպլոմ ստանալու անհնարինությունը» պատասխանի տարբերակը, իսկ հարցվածներից միայն մեկը որոշել է բուհում սովորել պարզապես դիպլոմ ունենալու համար (2%): Հարցվածներից 14 ուսանող ընդհանրապես չի պատասխանել այս հարցին:
Հաշվի առնելով հարցման արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ ուսանողները ընդունվել են ՀՖԿՍՊԻ մասնագիտական կարողություններ և հմտություններ ձեռք բերելու հստակ նպատակով, առանձնացվել են նաև այն ուսանողները, ովքեր ակնկալում են, որ բուհն ավարտելուց հետո կկարողանան աշխատանք գտնել իրենց մասնագիտությամբ:
Հիմք ընդունելով այս ցուցանիշները՝ կարող ենք ենթադրել, որ ուսանողները կրթություն ստանալու հարցում առավել կարևորում են պահանջված գիտելիքները և ոչ այնքան՝ ուղղակի դիպլոմ ստանալը:

Գծապատկեր 5

Խնդրում ենք նշել, թե ինչո՞ւ եք որոշել սովորել ՀՖԿՍՊԻ-ում



Գծապատկերից պարզ է դառնում, որ հարցվածների մեծամասնությունը դիմել է ՀՖԿՍՊԻ հաշվի առնելով մարզչամանկավարժական ոլորտի մասնագիտությամբ ուսումնառության հնարավորությունը (37%), ըստ արդյունքների՝ երկրորդ խմբում են այն ուսանողները, ում հետաքրքրել է բուհում տրամադրվող մասնագիտական կրթությունը (22%):

Հարցվածների 16%-ը կարևորել է բուհի բարձրորակ կրթությունը, իսկ հարցվածներից ընդամենը երկուսին ծնողներն են կողմնորոշել:

Հատկանշական է, որ հարցվածների շրջանում «Ավելի հեշտ է ընդունվել, քան այլ բուհ» և «Վարձավճարը ցածր է» գործոնները ոչ ոք չի կարևորել բուհում կրթություն ստանալու որոշումը կայացնելիս: Հարցվածներից 13 ուսանող նախընտրել է չպատասխանել հարցին:

Գծապատկեր 6

Ինչու՞ եք ընտրել տվյալ մասնագիտությունը



Գծապատկեր 6-ում ներառված են տարբեր գործոններին ուսանողների տված գնահատականները: Ըստ պատասխանների՝ զգալի թիվ են կազմում այն ուսանողները, ովքեր կարծում են, որ բուհը ավարտելուց հետո կկարողանան իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնել: Հարցվածների 39%–ը կարևորել է մասնագիտության հոգեհարազատ լինելը:

Համեմատաբար ավելի ցածր վարկանիշ են ստացել պատասխանի հետևյալ տարբերակները՝

- ✓ Ծնողներն են խորհուրդ տվել-3%
- ✓ Մասնագետների պահանջարկը մեծ է-3%
- ✓ Մոդայիկ մասնագիտություն է - 1.5%

Ուսանողներից 10-ի համար դեռևս հստակ չէ՝ ինչու է որոշել սովորել այդ մասնագիտությամբ:

Գծապատկեր 7

ՀՖԿՍՊԻ-ում Ձեզ ի՞նչն է դուր գալիս



Վերոնշյալ գծապատկերից երևում է, որ ուսանողներին ամենից շատ դուր է գալիս դասախոսական անձնակազմի մասնագիտական բարձր որակները: Հարցվածներից 22%-ը նշել է, որ բուհում իրեն դուր է գալիս ուսանողական հագեցած կյանքը:

Ըստ պատասխանների բաշխվածության՝ երրորդ խմբում է «ուսանողների նկատմամբ վերաբերմունք» տարբերակը (19%), իսկ դասավանդման նորարական մոտեցումներն ու մեթոդները տարբերակը առանձնացվել է հարցվածների 15%-ի կողմից:

Ինչպես երևում է արդյունքներից, բուհում առկա ռեսուրսներն ու ծառայությունները հետաքրքրել է հարցված ուսանողներից ընդամենը մեկին:

Գնահատեք ծածկագրված քննությունների անցկացման համակարգի արդյունավետությունը



Մինչ այս հարցի արդյունքների վերլուծումը նշենք, որ ուսումնասիրվել և գնահատվել է միջանկյալ քննությունների կազմակերպման և անցկացման նոր ընթացակարգը[2]: Ուսանողները գնահատել են անանուն և ծածկագրված կարգով միջանկյալ գրավոր քննությունների անցկացման արդյունավետությունը:

Ըստ ընթացակարգի՝ քննական գործընթացում ներգրավված են անկախ հսկիչներ, ովքեր ապահովում են քննական գործընթացի անմիջական վերահսկումը, կանխում քննակեղծիքը կամ քննակեղծիքի փորձերը (քննասենյակ բերել հաղորդակցության որևէ միջոց, էլ. սարքեր՝ նույնիսկ անջատված վիճակում, փաստաթղթեր):

Այսպիսով՝ քննական գործընթացի կազմակերպման և անցկացման նոր ընթացակարգի արդյունավետությունը ուսանողները, ընդհանուր առմամբ, բարձր են գնահատել: Նույնական են բաշխվել այն ուսանողների պատասխանները, ովքեր կարծում են, որ նոր քննակարգը մոտիվացնում է սովորելու համար և նպաստում է արդարամիտ գնահատմանը:

Ուսանողների 18%-ը նշել է, որ նոր համակարգը օբյեկտիվ է և թափանցիկ: Կան նաև այնպիսի ուսանողներ, ովքեր կարծում են, որ միջանկյալ քննությունների նոր համակարգը քիչ ազդեցություն է ունենում կրթության որակի վրա: Իսկ ուսանողներից 15-ը հարցի շուրջ չի հայտնել իր կարծիքը:

[2] http://www.asipc.am/about/doc/regulation/Qnnakan%20naxagic.pdf

Գծապատկեր 9

Խնդրում ենք նշել, թե որոնք են բուհում գործող գնահատման համակարգի թերությունները



Քննաշրջանի ավարտին առաջին կուրսեցիների շրջանում անցկացված հարցմամբ նպատակ էր դրվել վերհանել ուսանողների կարծիքը գնահատման համակարգի վերաբերյալ, պարզել թերություններն ու գնահատման գործող համակարգի արդյունավետության վրա ազդող գործոնները:

Գնահատման համակարգի թերությունների վերաբերյալ ուսանողների տված պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ. այս հարցին պատասխանած ուսանողների 16%-ը թերություններ չի տեսնում, 15%-ը դասախոսի սուբյեկտիվ մոտեցումներն է առանձնացրել որպես խնդիր, որոշ ուսանողների կարծիքով գնահատման համակարգը ամբողջությամբ թերի է:

Ուսանողների 10%–տոկոսը նշել է, որ իրենց համար պարզ չէ՝ ինչպես է ձևավորվում ամփոփիչ գնահատականը:

Փոքրաթիվ ուսանողներ համարում են, որ գնահատման համակարգի թերություններից են բարեկամական և ընկերական կապերի ազդեցությունները կրթական գործընթացում: Հարցվածներից 27 ուսանող ընդհանրապես չի կարողացել հարցին պատասխանել:

Գծապատկեր 10

Ուսուցման ավարտին ի՞նչ կուզենայիք ստանալ



42%	19%	3%	1.5%

Ինչպես վկայում են վերը թվարկված ցուցանիշները, մասնակիցների մեծամասնությունը ուսումնառության ավարտին ցանկանում է ունենալ անհրաժեշտ գիտելիքներ և աշխատանքի հնարավորություն:

Տվյալ հարցադրման արդյունքները համադրելով **Գծապատկեր 6-ի** տվյալների հետ նկատում ենք, որ այն ուսանողները, ովքեր ընտրել են տվյալ մասնագիտությունը կարծելով, որ ավարտելուց հետո կկարողանան իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնել, ակնկալում են, որ ուսուցման ավարտին ձեռք կբերեն իրենց ընտրած մասնագիտությամբ աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ:

Բավականին դրական ցուցանիշ է, որ հարցված ուսանողներից միայն երկուսն է կարևորում սոսկ դիպլոմի առկայությունը:

Գծապատկեր 11

Հետագայում պատրաստվում ե՞ք աշխատել Ձեր ընտրած մասնագիտությամբ



Հաշվի առնելով մասնագիտական կրթության և աշխատաշուկայի կապերի խզվածության տարբեր պատճառները, ինչպես օրինակ մասնագիտական աշխատաշուկայում զբաղվածության ցածր մակարդակը, մանկավարժների ցածր վարձատրությունը և աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի փոփոխման դրդապատճառները, կարևոր էր հասկանալ ինստիտուտի ուսանողների՝ սեփական մասնագիտությամբ աշխատելու մոտիվացիայի և պատրաստակամության աստիճանը:

Ըստ հարցման արդյունքների՝ հարցվածների զգալիս մասը պատրաստվում է բուհն ավարտելուց հետո իր մասնագիտությամբ աշխատել (42%), մյուս խումբը դեռևս չի կողմնորոշվել (18%), կան այնպիսիք, ովքեր արդեն աշխատում են իրենց ընտրած մասնագիտությամբ (6%): Իսկ 29,5 %-ի համար դեռևս հստակ չէ՝ ավարտելուց հետո կաշխատի իր մասնագիտությամբ, թե ոչ:

Սակավաթիվ են այն ուսանողները, ովքեր չեն ցանկանում և չեն էլ պատրաստվում իրենց մասնագիտությամբ աշխատել:

Ուսանողների տված պատասխանները վկայում են, որ ուսանողների շրջանում կա աշխատաշուկայում սեփական մասնագիտությամբ իրացվելու պահանջմունք և մոտիվացիա:

Աղյուսակ 1

Կրթական միջավայրի բարելավմանն ուղղված առաջարկություններ

Պատասխաններ	մասնագիտություն	f*
Լինեն արդար ու թափանցիկ քննություններ:	մանկավարժ	**1**
Դասընթացը դարձնել 70 րոպե:	մանկավարժ	**1**
Դասախոսները անհարգի գնահատականներ են շռայլում չսովորող ուսանողներին և անվճար համակարգում սովորող ուսանողներին դնում վտանգի տակ:	մանկավարժ	**2**
Միջանկյալները և քննությունները լինեն թեստերով:	մանկավարժ	**10**
Ամեն բան լավ է կրթական ոլորտում և դասախոսական կազմում:	մանկավարժ	**1**
ՀՖԿՍՊԻ-ն ունենար ուսանողական ավան, որտեղ կբնակվեին Հայաստանի շրջաններից և սփյուռքից եկած ուսանողները:	կինեզոլոգիա	**1**
Ինստիտուտն ունենար ստանդարտներին համապատասխան դահլիճներ մարզումները լավ կատարելու համար:	մանկավարժ	**14**
Խստացնել ուսանողների բացակայությունը:	կինեզոլոգիա	**12**
Նորարարական տեխնոլոգիաների օգտագործում:	լրագրող	**7**
Սկզբի համար ուղղակի պետք է հրավիրել համապատասխան լուրջ մասնագետներ:	լրագրող	**6**

* *f*-ը պատասխանների կրկնման հաճախականությունն է:

Եզրակացություն

Ուսանողական հարցման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս անել որոշակի հետևություններ և եզրակացություններ, որոնք կարող են ուրվագծել ուսանողների մասնագիտության ընտրության դրդապատճառները և ուսանողներից ստանալ հետադարձ կապ կրթական միջավայրի բարելավմանն ուղղված գործողությունները նախագծելու համար:

Ամփոփելով հարցման արդյունքների վերլուծությունը՝ կարող ենք նշել, որ տեղեկատվության պաշտոնական աղբյուրները դիմորդների համար հիմնականում չեն եղել ՀՖԿՍՊԻ-ում կրթության ստանալու հնարավորությունների մասին տեղեկանալու միջոց:

Չնայած որ 2018-2019 ուսումնական տարում հանրակրթական դպրոցի ավարտական դասարանների շրջանում իրականացվել են մասնագիտական կողմնորոշման բազմաթիվ այցեր, այնուհանդերձ հարցված ուսանողներից որևէ մեկը բուհում կրթություն ստանալու որոշումը չի կապել այդ այցերի ընթացքում ստացած տեղեկատվության հետ:

Հետաքրքրական է, որ ուսանողների համար մասնագիտության մոդայիկ լինելը չի հանդիսացել մասնագիտության ընտրության լուրջ դրդապատճառ:

Բացի այդ ուսանողները կրթություն ստանալու հարցում առավել կարևորում են պահանջված գիտելիքները և ոչ այնքան՝ ուղղակի դիպլոմ ունենալը:

Հատկանշական է, որ ՀՖԿՍՊԻ-ի ցածր վարձավճարը ուսանողների կողմից չի դիտարկվել բուհը ընտրելու առաջնային գործոն: Հիմնականում կարևորվել են հետևյալ հիմնական բնութագրիչները՝ մարզչամանկավարժական ոլորտում ուսուցման, ապագայում մասնագիտությամբ աշխատելու հնարավորությունը:

Կրթական միջավայրը գնահատելիս ուսանողները բարձր են գնահատել դասախոսական անձնակազմի մասնագիտական բարձր որակները, բուհում իրենց ցուցաբերված վերաբերմունքը:

Ինչպես արդեն նշել ենք, այս հետազոտության ընթացքում կարևորել ենք 1-ին կուրսի ուսանողների կողմից ստանալ հետադարձ կապ քննությունների կազմակերպման և անցկացման նոր կարգի վերաբերյալ, պարզել դրա բացասական և դրական կողմերը:Այսպիսով՝ ուսանողները կարծում են, որ նոր համակարգը օբյեկտիվ է, թափանցիկ և իրենց մոտիվացնում է սովորել, նպաստում արդարամիտ գնահատմանը:

Ամփոփելով իր ընտրած մասնագիտությամբ աշխատելու ուսանողների նախընտրությունները՝ կարող ենք ասել, որ ուսանողները հիմնականում եկել են բուհ սովորելու և ավարտելուց հետո մասնագիտական ոլորտում աշխատանքի անցնելու բարձր մոտիվացվածությամբ: Ցածր տոկոս է կազմում այն ուսանողների թիվը, ովքեր բուհական կրթությունը համարում են պարզապես դիպլոմ ստանալու հնարավորություն:

Այս համատեքստում կարևոր է շարունակել պարբերաբար հարցումները ոչ միայն նրանց հետ կայուն հետադարձ կապ ապահովելու համար, այլև առավել խորքային ուսումնասիրություններով արտացոլել ուսանողների սովորելու մոտիվացիայի բարձրացման կամ անկման պատճառները:
Հիմք ընդունելով հարցումների արդյունքներն ու արված եզրահանգումները՝ ներկայացնում ենք հետևյալ առաջարկություններն ու երաշխավորությունները.

1. Ակտիվացնել բուհի պաշտոնական տեղեկատվական հարթակների աշխատանքը՝ պաշտոնական կայք, սոցիալական ցանցեր, յութուբյան ալիք: Սա ենթադրում է նաև, որ հարկավոր է՝
   - ✓ *բարձրացնել ՀՖԿՍՊԻ-ի հասարակական պատասխանատվությունը և ապահովել գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը,*
   - ✓ *ընդլայնել ՀՖԿՍՊԻ-ի ներգրավումը հասարակությանը մատուցվող կրթական ծառայություններում գիտելիքի հաղորդման, ստեղծման և տարածման միջոցով,*
   - ✓ *ապահովել բուհի գործունեության վերաբերյալ հասարակության լայն շրջանակների իրազեկումը՝ իրականացնելով տեղեկատվական և ՀՖԿՍՊԻ—ի գործունեության հանրայնացման քաղաքականություն,*
   - ✓ *իրականացնել ռեբրենդինգ:*
2. Նորավարտ և վերջին տարիների շրջանավարտների շրջանում անցկացնել մասնագիտական աշխատաշուկայում զբաղվածության իրավիճակային վերլուծություն, ուսումնասիրել մասնագիտական ոլորտում ձեռքբերումներ ունեցած և հաջողությունների հասած շրջանավարտների տվյալները: «Հաջողությունների պատմությունները» կօգնեն ոչ միայն բարձրացնել ինստիտուտի մատուցած կրթության հանրային վստահությունը, այլև ապագա ուսանողների համար առավել հստակ կլինի, թե ավարտելուց հետո, որտեղ կարող են աշխատանքի անցնել և ինչ քայլեր պետք է կատարեն բուհից աշխատաշուկա դյուրությամբ անցնելու համար:
3. Իրականացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործող համակարգի վերաբերյալ դասախոսական և ուսանողական հարցումներ: Վերլուծել հարցումների արդյունքները գործող համակարգի լավ ու վատ կողմերը պարզելու համար: Այդ հետազոտություններում հաշվի առնել 1-ին կուրսի ուսանողների տված գնահատականները, որոնք օգնել են դուրս բերել գնահատման գործող համակարգի թերություններն ու փոփոխությունների անհրաժեշտությունը:
4. Վերանայել ուսանողի գիտելիքի ստուգման և գնահատման մեթոդները, սահմանել յուրաքանչյուր առարկայի գնահատման չափանիշներ/ռուբրիկներ և

ուսանողներին դրանք հասանելի դարձնել՝ ապահովելով գնահատման թափանցիկությունը:

5. Նոր քննակարգի տարրերից ներդնել բարձր կուրսերում, որը կնպաստի բուհում ակադեմիական ազնվության ապահովմանն ու բարելավմանը:
6. Ուսուցման գործընթացում մեծացնել պրակտիկ գիտելիքների մատուցման բաղադրիչը: